ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԼՈՌԻՈՒՄ
(XIX դ. երկրորդ կես)

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

XIX դ. Լոռու գավառում պահպանվում էին հողատիրության ազնվականական, վանքապատկան և պետական ձևերը: Դարի կեսերից, կապիտալիստական հարաբերությունների հաստատմանը զուգընթաց, ծավալվեց վաշխառուական կապիտալը, ձևավորվեց գյուղի հարուստ խավը՝ ի դեմս գյուղական կալվածատերերի: Եկեղեցին, պետությունն ու կալվածատերերն սկսում են հանդես գալ խոշոր կապալառուի դերում: Իրենց հողերի մի մասն սկսում են վաճառել կամ երկարաժամկետ վարձավճարով տալ նաև Լոռու ազնվականներ Օրբելիանիները, Կորուլովները, Մելիքովները, Բարաթովները և այլք:Առաջ է գալիս հողօգտագործման նոր՝ վարձավճարային կամ արենդային տեսակը, ինչն ավելի է խորացնում հողի համար պայքարը հողատերերի, հողի կառավարիչների, պետության ու գյուղացիների միջև:

Հողային վեճեր էին ընթանում իշխան Արղությունների և Սանահինի վանքի միջև, քանի որ գյուղի հողերը կիսվում էին այդ երկուսի միջև: «Յաղագս կալուածոյ Սանահնի վանից» գործում Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին Կոնսիստորիային է ներկայացնում Սանահին և Որնակ գյուղերի հողերի համար վեճի մանրամասները, որտեղից պարզ է դառնում, որ հատուկ նշաններով՝ «իւրկրաչափական նշանօք», առանձնացվել են Արղություններին ու վանքին պատկանող հողերը[1]:

Վեճեր հաճախակի էին լինում վանքապատկան բնակչության, որոնք վարձակալում էին Էջմիածնի, Օձունի, Հաղպատի և Սանահինի վանքերին պատկանող հողերն ու բերքի մի մասը հանձնում այդ վանքերին, և եկեղեցականների միջև: Այդվանքերի ու դրանց պատկանող հողերի վարձակալ, հիմնականում նախկին ազնվականապատկանգյուղացիների միջև ձևավորվում են կապալային հարաբերություններ.այսպես՝ վանքերը, որպես խոշոր հողատեր, գյուղացիների հետ կնքում են երկկողմանի պայմանագիր:

Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային Կոնսիստորիայի[2] արխիվումպահպանվել են բազմաթիվ կալվածագրեր՝ կնքված Հաղպատի վանքի և Լոռու կալվածատերերի միջև, որոնցով սահմանված են հողը կապալով տրամադրելու պայմանները՝ հողի չափը, վարձակալման ժամկետը և այլն[3]: Կա-

---

[1] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 53, ց. 1, գ. 2918:*

[2] *Ստեղծվել է 1837 թ. օգոստոսի 6-ին ռուսական կառավարության հաստատած կանոնադրության համաձայն՝ որպես հայոց հոգևոր թեմ, որի իրավասությունը տարածվում էր նաև Լոռու եկեղեցիների ու ծխերի վրա:*

[3] *Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 236ա, վավ. 12, թղթ. 236է, վավ. 11, թղթ. 237բ, վավ. 60, թ. 1:*

պալով տրամադրվել են անգամ վանքերի սրբատեղիները, ուխտատեղիները: Այս ամենի մասին տեղեկանում ենք 1878 թ. դեկտեմբերի 13-ին կազմված «Գործ Հաղպատի ուխտատեղիները կապալով տալու մասին» վավերագրից[4]:

Օձունի եկեղեցապատկան Մարցի կալվածքի կապալառու Եզեկ Տեր-Բարսեղյան-Աբովյանը 1896 թ. մայիսի 16-ին խնդրագիր է հղում Կոնսիստորիային՝ նշելով, որ պարոն Տիգրան Տեր-Դավթյանը կալվածքը տասը տարուց ավելի կառավարելով և եկամուտները յուրացնելով՝ իրեն և հոգևոր իշխանությանը ոչինչ չի տվել: Խնդրում է իրեն վերադարձնել Մարց և Լորուտ գյուղերը եկեղեցապատկան բոլոր կալվածքներով՝ տարեկան 400 ռուբլի կապալադրամով: Խոստանում է իր վրա վերցնել բոլոր ծախսերը, որոնք կպահանջվեն պետական և ազնվականՄելիքյանների հողերի սահմանները որոշելու համար, այն պայմանով, որ □սահմաննիրը վիրջնականապէս որոշիլուց յիտոյ, ի՛ բաց ասիալ Բաժբէուք-Միլիքիաննիրի և արքունական կալուածների մասը, վանքապատկան մասը գիւղիրով և բոլոր կալուածնիրով բարիհաճիք թողնիլ ինձ վիրայ վից տարի ժամանակավ տարիկան հինգ հարիւր ռուբլիով□[5]: Ապա ավելացնում է, որ Մարցի հողերի քննության հարցը, որոնց մի մասը պատկանում է վանքին, մի մասը՝ կալվածատերերին, այդ թվում՝ իրեն և իր որդիներին, ներկայումս, որպես վիճելի տարածք, գտնվում է կառավարիչ սենատի ձեռքում: Կալվածքի մի մասն էլ հափշտակվել էր հարևան Ղազախի գավառի թաթարների կողմից[6]: Փաստորեն, գյուղի հողերի համար պայքար էր գնում կապալառուի, կալվածատիրոջ, վանքի և թաթարների միջև: 1910 թ. Մարցի վանքապատկան բնակիչները գանգատագիր են հղում կաթողիկոսին՝ ընդդեմ կառավարիչ, «վաշխառու» Թումանյանցի[7]:

Լոռու խոշոր հողատեր Մայր աթոռ ս. Էջմիածնի և տեղի վանքերի միջև ևս հակասություններ են ծագել: 1854 թ. Օձունի վանքի կալվածքների հոգեբարձուները Վրաստանի և Իմերեթի հայոց վիճակային Կոնսիստորիային բողոքում են Մայր աթոռից և ներկայացնում մի քանի պահանջներ, այդ թվում՝ իրենց հանձնել վանքի հոգաբարձուական կալվածագրերի տնօրինությունը և տալ իրավունք ստանալ կալվածքների արդյունքները[8]: Գործի քննարկումը Կոնսիստորիայի դատական ատյաններում տևել է մինչև 1885 թ.:

Վանքային հողերի մի մասը կապալով տրամադրելու նոր համակարգն ավելի վատթարացրեց վանքապատկան գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը, իսկ սրբավայրերը վարձավճարով տալը վիրավորում էր նրանց կրոնական զգացմունքները: Գյուղացիները տարբեր միջոցներով են արտահայտել իրենց դժգոհությունը: 1881 թ. մայիսի 28-ինՀաղպատի վանահայր Հովսեփ վարդապետ Խարազյանցը Լոռու պրիստավին գանգատվում է վանքապատկան գյուղացիներից[9]: Հաջորդ վանահայր Հակոբ Նորատուսյանի 1892 թ. օգոստոսի 28-ի գրությունից տեղեկանում ենք, որ վանքի հողերի մի մասը կա-

---

[4] *Նույն տեղում, թղթ. 232, վավ. 330, թ. 1–4:*

[5] *ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2432, թ. 16:*

[6] *Նույն տեղում, գ. 2397, թ. 155, 166:*

[7] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 237գ, վավ. 279, թ. 1–2:*

[8] *ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 2741, թ. 33:*

[9] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 235բ, վավ. 19:*

պալով վերցրած գյուղացիները, չկարողանալով վճարել վանքին հասանելիք հարկը, իրենց դժգոհությունն արտահայտել են հողերի գրավմամբ[10]: 1893 թ. հունիսի 18-ին Հաղպատի Ստեփան քահանայի որդի Արամ Կախոյանը դիմում է Կոնսիստորիային, հայտնելով, որ գյուղացիները բռնիգրավել են իրենց ժառանգական վարելահողերը և ուխտատեղիները՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել հողերը վերադարձնելու համար[11]:

Հողային վեճեր արձանագրվել են նաև հոգևորականների ու ազնվականների միջև: 1891 թ. վանահայր Նորատունկյանը Վրաստանի և Իմերեթի հայոց Կոնսիստորիային ուղղած գրությունների մեջ տեղեկացնում է իր և Հաղպատի բնակիչ Զաքար Երզնկյանի միջև եղած վեճի մասին՝ վերջինիս կողմից կապալով ձեռք բերածվանքապատկան վարելահողերի շուրջ[12]:

Վանքապատկան հողերի մի մասի անցումը կալվածատերերի կամ կապալառուների ձեռքը՝ վերջիններիս համար դրանք սեփականացնելու նպաստավոր հանգամանքներ է ստեղծում: Հողերի մի փոքր մասն էլ ժամանակի ընթացքում պետականացվում է:1889 թ. Հաղպատի նոր վանահայր Զաքարիա Լալայանը Լոռու եկեղեցական կալվածքների կառավարիչ Արիստակես Աբովյանին գանգատվում է, որ վանական կալվածքները տրվել են կառավարությանը[13]:

XIX դ. II կեսից ցարական կառավարությունը կայսրության ծայրամասերումնախաձեռնեց գյուղացիական բարեփոխումներ: 1861 թ. հրատարակվում է «Անդրկովկասի հողաչափության կանոնադրությունը»: 1880-ական թվականների սկզբներին ստեղծվեցին կառավարման հանձնաժողովներ: Վերջիններիս կողմից կազմվեցին պետական հողերի հողաբաժանման պլաններ, որոնք ղեկավարվում էին պետական ունեցվածքի կառավարման մարմնի (վարչության) կողմից: Բարեփոխումների նպատակն էր հաշվառել բոլոր՝ մասնավոր և պետական հողերի քանակը, որոշակիացնել հողատիրությունների սահմանները և այդպիսով ապահովել դրանց անձեռնմխելիությունը:

Հողի պակասը և մշտապես վեճի առարկա լինելը պատճառ են դարձել, որ Բորչալուի գավառում[14] պետական հողերի հողաբաժանման չափումներ (երբ մանրամասն նշվում էին տվյալ գյուղի սահմանները) հաճախակի տեղի ունենան: Նմանօրինակ աշխատանքները բխում էին հողերի վիճակը բարելավելու պետական կառույցների շահագրգռվածությունից, ինչը նպատակ ուներ բարձրացնել հողի շահութաբերությունը, մեծացնել վերահսկողությունը գյուղացիներից ստացվող հարկի նկատմամբ և պետական հողերը զերծ պահել կողմնակի անձանց ու համայնքների հավակնություններից:

Հողաչափական աշխատանքներն առաջին հերթին արտահայտվեցին հողի

---

[10] *Նույն տեղում, թղթ. 236թ, վավ. 8, թ. 1–4:*

[11] *Նույն տեղում, թղթ. 236ժ, վավ. 1:*

[12] *Նույն տեղում, թղթ. 236ը, վավ. 16:*

[13] *Նույն տեղում, թղթ. 238, վավ. 229, թ. 1:*

[14] *1880 թ. Թիֆլիսի գավառից որպես առանձին վարչական միավոր առանձնացվեց նրա հարավ արևմտյան հատվածը և կազմվեց Բորչալուի գավառը, որի մեջ մտան Բորչալուի հարթությունը, Լոռին և Թրիալեթ լեռնային գավառները կամ Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի Զորոփոր, Ծոբոփոր, Տաշիր, Թռեղք, Բողնոփոր և Կանգարք գավառները:*

հավասար վերաբաշխմամբ՝ ըստ շնչերի կամ համայնքների, ինչը կմեծացներ հողօգտագործման արդյունավետությունը: Մինչ այդ հողի ոչ ճիշտ բաշխման արդյունքում մեծ հողատարածքներ մնացել էին անմշակ: Պետական 36 գյուղերում, այդ թվում Լոռու ռուսական վեց գյուղերում կատարվեց հողաբաժանում՝ ըստ ծխերի: Հողաչափական աշխատանքներին նախորդեց գավառի գյուղերի, դրանց հողային տարածքներն ըստ տեսակների (վարելահողեր, տնամերձեր, անտառներ և այլն) և պատկանելության հաշվառումը: Ըստ այդմ՝ Բորչալուի գավառում պետությանը պատկանում էին հետևյալ հանդամասերը. 1) 98 գյուղերի հողատարածքներ՝ 106,152 դեսյատին[15] տարածքով, 2) հողեր՝ տրամադրված գերմանական գաղութներին՝ Ալեքսանդերհիլֆս, Եկատերինենֆելդ և Ելիսավետպոլ (Թիֆլիսի գավառ)՝7325 դեսյատին, 3) անտառներ՝ մարգագետիններով՝ 66, 919 դեսյատին, 4) ձմեռային և ամառային արոտավայրեր՝ 48, 396 դեսյատին, 5) տարբեր հարկատու հողեր՝ մոտավորապես 2,143 դեսյատին, ընդամենը՝ 230,935 դեսյատին: Բացի նշված պետական հողերից, որոնք կազմում էին ամբողջ գավառի մակերեսի 564,472 դեսյատինը, մնում էին ևս 333, 537 դեսյատինի հասնող տարբեր հանդամասեր, որոնք չէին մտնում պետական կառավարման տակ: Նման հողերը՝ հիմնականում բաղկացած անտառներից, արոտավայրերից, վարելահողերից, այգիներից ու բնակավայրերից, պատկանել են՝ 1) իշխանական և ազնվականական ընտանիքներին՝ որպես ժառանգական տիրույթ, 2) թաթար աղալարներին, որ հողը որպես պարգև ստացել էին 1846 թ. դեկտեմբերի 6-ի բարձրագույն շնորհագրով[16], 3) հայկական եկեղեցուն, որ ձեռք էին բերվել հնագույն հրովարտակներով, 4) լեռնային պղնձագործարաններին, 5) առանձին անձանց և համայնքներին, որոնք դրանք ձեռք էին բերել ազնվականներից հողեր գնելով:

1885 թ. դրությամբ Բորչալուի գավառում հանձնաժողովների կազմած վիճակագրությամբ նշված 333,537 դեսյատին տարբեր հողատարածքների վրա ապրում և դրանցից օգտվում էին՝ մասնավոր սեփականատերեր՝ 496 ծուխ (5185 շունչ՝ երկու սեռից), կալվածատերերի հողերի վրա վարձավճարի պայմանով ապրողներ՝ 1280 ծուխ (10560 շունչ), ըստ 1870 թ. պոլոժենիայի[17] ապրողներ՝ 2241 ծուխ (11525 շունչ), ժամանակավոր պարտավոր գյուղացիներ[18]՝ 1774 ծուխ (12311 շունչ), ժամանակավոր բնակիչներ(հավանաբար եկվորներ՝ վերաբնակիչներ)՝ 515 ծուխ (2665 շունչ), ընդամենը՝ 6312 ծուխ և

---

[15] *1 դեսյատինը հավասար է 1,0925 հա:*

[16] *Նիկոլայ I կողմից 1846 թ. դեկտեմբերի 6-ին տրված հողային իրավունքի մասին հրովարտակով Անդրկովկասի խաներին, մելիքներին, բեկերին ու աղալարներին շնորհվում էին հողային արտոնություններ, այդպիսով թուրք-թաթարական բարձր դասին դրդելով երախտապարտ լինել և միշտ պատրաստ՝ կատարել իր վրա դրված պարտականությունները:*

[17] *1870 թ. մայիսի 14-ի հողային ռեֆորմի կանոնադրությամբ (պոլոժենիա) հողի սեփականատեր ճանաչվեց մուլքադար կալվածատիրությունը, իսկ գյուղացիներին իրավունք տրվեց օգտվել այդ հողերից: Տես՝ Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 2010, էջ 391:*

[18] *1870 թ. կանոնադրությամբ գյուղացին կարող էր փրկագնել իր հողաբաժինը, իսկ մինչ այդ համարվում էր ժամանակավոր պարտավորյալ:*

42246 շունչ[19]:

Եղել են նաև անձեռնմխելի, պետական բահրային հողեր՝ ա) տարածքներ, որոնք գտնվում էին զինվորական հրամանատարության տրամադրության տակ, ինչպես, օրինակ, ռուսական շտաբս-կվարտիրայի չինովնիկներին բնակվելու համար հողեր էին հատկացվել պետական գյուղերում՝ Ջալալօղլիի(այժմ՝ Ստեփանավան) տարածքում՝ 137 դեսյատին, Գարգառում(ռուսական)՝ 80 դեսյատին, Ծալկայում՝ 10 դեսյատին, ընդամենը՝ 227 դեսյատին հողատարածք[20]: Ջալալօղլում որոշակի հողատարածք էլ գտնվում էր հրետանային մարտկոցի 39-րդ զորամասի ձեռքում: բ) Տարածքներ՝ տրամադրված մասնավոր սեփականատերերին, ուր նրանց կողմից կառուցվել էին հասարակական շինություններ: Այսպես, նշենք 1859 թ. 50 տարով չինովնիկ Միխայիլ Խանագովին և Մաթևոս Այդոնովին հայկական Ջալալօղլում տրված հողերը, ուր կառուցվել են ալրաղացներ: Նույն թվականին միևնույն ժամկետով Ջալալօղլում և այլուր հողեր են տրվել Սահակ Արութունովին, Եգոր Սաղաթելովին, Գևորգ Սահակովին, Հովհաննես Չիլյաբովին և այլոց: գ) Որսորդության համար առանձնացված տարածքներ՝ Դեբեդ գետի աջ ափին՝ Շնող, Արճիս և Ճալա գյուղերի մոտ: 1885 թ. տարածքը մեկ տարի ժամկետով տրվել է Թիֆլիսի բնակիչ Դոլմասովին[21]:

Ինչ վերաբերում է արոտավայրերին, ապա դրանք մինչև 1862 թ. իշխանությունների կողմից տրվում էին կապալով, և դրամատերերը, դրանք վերցնելով, վերադիրներով տալիս էին բնակչությանը: 1862 թ. օգտագործման այդ ձևին փոխարինելու եկավ համայնական օգտագործումը[22]: Իսկ 1884 թ. հունիսի 29-ի ցարական կառավարության կողմից հրատարակված օրենքի համաձայն, արոտավայրերը տրվում էին ինչպես գյուղացիներին ու համայնքներին, այնպես էլ արտոնյալ անձանց՝ սերնդեսերունդ օգտագործելու համար, յուրաքանչյուր դեսյատինի համար տրվող վարձը պետական գանձարան մուծելու պայմանով: Համայնքի յուրաքանչյուր անդամ իրավունք ստացավ համայնքից դուրս ինքնուրույն կամ համայնքի անդամների հետ վարձավճարման սկզբունքով պետական արոտավայրեր վերցնել իբրև հողաբաժին, իսկ հետագայում դրանք սեփականացնել: Այդ օրենքով, փաստորեն, ռուսական կառավարությունը համայնական արոտավայրերը պետականացրեց: Այժմ դրանցից օգտվելու համար պարտավոր էին վճարել (վարձակալման վարձը մեկ դեսյատինի համար կազմում էր 20 կոպեկ)[23]: Վարձակալման հիմունքներով պետական հողեր ու արոտավայրեր ձեռք բերելով՝ ունևորների առանձին խմբեր դրանք վաճառում էին գյուղացիներին 5–10 անգամ թանկ, քան վարձակալման գներն էին: Արոտավայրային տեղամասերի մի փոքր մասը մնաց գյուղացիների ձեռքում կամ համայնքի տրամադրության տակ:

---

[19] А. Е р и ц о в. Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисской губернии. Тифлис, 1889, с.107.

[20] *Նույն տեղում, էջ 62:*

[21] *Նույն տեղում, էջ99, 100, 103:*

[22] *Ս. Վ ի ր ա բ յ ա ն, Գ. Ե թ ի մ յ ա ն. Մեծ Ղարաքիլիսա, հ. 1, Երևան, 2002, էջ 145:*

[23] *Նույն տեղում, էջ 146–148:*

Լոռիում գործող հանձնաժողովի աշխատանքներն իրականացվել են 1880–1890-ական թվականներին՝պետական հետևյալ գյուղերի հողատարածքներում. Հագվի, Հայդարբեկ, Ազարակ, Արճիս, Գարգառ (հայկական), Գարգառ (ռուսական), Գյուլաքարակ, Դարբաս, Ջալալօղլի, Քոլագիրան, Կուրթան, Լէջան, Լոռի, Մղարթ, Օվանդարա, Հոբարձի, Պրիվոլնոյե, Ուզունլար, Նոր Ուզունլար, Ուռուտ, Ծաթեր, Ճալա, Շնող: Հանձնաժողովը տեղում մանրամասն արձանագրում էր ծխերի ու հողերի քանակը, հողի որակը, բարեբերությունը, երաշտները, կարկտահարությունները, անգամ բնակիչների բողոքները, խնդրանքները, կարիքները՝ փորձելով հնարավորինս հավասարեցնել հասարակական հողաբաժինները: Բորչալուի գավառի98 պետական գյուղերի հողաբաժիններից 1885 թ. Լոռուն բաժին էր ընկնում տնամերձ հողեր՝ 248 դեսյատին, բանջարաբոստանային՝ 318, անջրդի վարելահող՝ 16,593, խոտհարքներ՝ 6,109, արոտավայրեր՝ 11,771, ընդամենը՝ 35,039 դեսյատին: Իսկ ծխին ու շնչին բաժին ընկնող հողաչափով հետևյալ պատկերն է գրանցվել. վարելահողերից յուրաքանչյուր ծխին բաժին էր ընկնում 8,09 դեսյատին հողատարածք, ամբողջ հողային ֆոնդից՝ 17, 08 դեսյատին, իսկ յուրաքանչյուր շնչին (արական սեռի)՝ 1, 78 դեսյատին վարելահող, ամբողջ հողից՝ 2,04 դեսյատին: Ընդհանուր առմամբ Լոռու գավառը հանձնաժողովի պաշտոնական տվյալներով 1885 թ. ունեցել է 35039 դեսյատին պետական հողատարածք[24]:

Այսպիսով, Բորչալուի 98 գյուղերից 62-ում դեռևս պահպանվում էին մինչ 1880-ական թվականները կատարված հողաբաժանումները, իսկ 36 գյուղում տեղի են ունեցել վարելահողերի հավասար սահմանաբաժանումներ: Երկու համակարգն էլ՝ հին և նոր, զերծ չէին թերություններից, սակայն պահպանում էին համայնքային հողօգտագործման կարգը և բացառում համայնքի անդամների կողմից հողը որպես սեփականություն օգտագործելու և առք ու վաճառքի ենթարկելու իրավունքը[25]: Պետական գյուղերն ընդմիշտ զերծ են մնում կողմնակի անձանց ոտնձգություններից: Լոռու բնակիչների առաջնային խնդրանքներն են եղել, որ իրենց կողմից նախկինում վարձավճարով վերցված հողամասերը, որոնք այժմ ուրիշների ձեռքում են, վերածվեն հողաբաժինների, հետ վերադարձվեն և միջոցներ ձեռք առնվեն քոչվոր թաթարների հարձակումների դեմ: Բողոքել են ջրի, անասունի, հողի պակասից, հարևան գյուղացիների հողազավթումներից, ամառային արոտավայրերի բացակայությունից, պետական չինովնիկների ու ազնվականների ճնշումներից, նախկին հողաբաժանումներից: Թաթարներից բողոքել են 51, հարևան գյուղերի բնակիչներից՝ 19, կալվածատերերից՝ 10 գյուղում և այլն[26]:

Հանձնաժողովի կողմից հողապակասության բողոքներ գրանցվել են հատկապես Ջալալօղլի գյուղում, որի հողերի մի մասն անցել էր գյուղի շրջակայքումտեղակայված ռուսական շտաբս-կվարտիրային, մի մասն էլ պետական ունեցվածքի կառավարման մարմնի կողմից տրվել էր այլ կարիքավորների: Ջալալօղցիները խնդրում էին վերադարձնել նախկինում իրենց պատկանող հողերի գոնե մի մասը: Հողի մեծ պակաս ունեին վարդաբլուրցիները, հատկա-

---

[24] Ա. Ե ր ի ց ո վ. *Նշվ աշխ., էջ 38–39, 117:*

[25] *Նույն տեղում, էջ 65:*

[26] *Նույն տեղում, էջ 41–57, 61:*

պես երբ պետական պաշտոնյա Մ. Խանագովը 1884 թ. նրանցից դատարանով շահեց 109 դեսյատին հողաբաժին: Գյուղացիները որպես փոխհատուցում հանձնաժողովից խնդրում էին վարձավճարային կարգով իրենց տրամադրել Փոցխարաքար կոչվող հանդամասը, որը տրվել էր կուրթանցիներին[27]*:*

Կուրթան գյուղի հողաբաժինների մի մասը ևս 1883 թ. օտարվել էր՝ հօգուտ չինովնիկ Խանագովի: Կուրթանցիները և վարդաբլուրցիները դիմադրություն ցույց տվեցին հողատերերին, ինչի արդյունքում պետական ունեցվածքի վարչությունը վերահսկողություն սահմանեց՝ գյուղերն ուղարկելով 100 կազակ, դատարանին հանձնելով անկարգությունների գլխավոր մեղավորներին: Նովոալեքսանդրովկայի բնակիչները բողոքում էին, որ իրենց հողատարածքների մի մասը դատարանի որոշմամբ տրվել է Խանագովների իշխանական տանը: Հայդարբեկի բնակիչներին օգտագործման էին տրվել Լեջանի ամառային արոտավայրերը՝ դեսյատինը 6 կոպեկով: Քոլագիրանցիները բողոքում էին, որ անտառային վարչությունն իրենցից վերցրել և շահալցիներին է հանձնել տարածքներ, իսկ կուրթանցիները, որոնք վարձավճարով վերցրել էին իրենց հարևանությամբ գտնվող Արզականի հողերը, անցնելով սահմանը, վարել են իրենց հողերից 10 դեսյատին: Խաչիգեղցիները բողոքում էին, որ իրենց սահմանները հաճախ են խախտվում հարևան դամշկուտցիների, դսեղցիների կողմից: Քարինջի հողերը երեք կողմից սահմանակից էին Լորիս-Մելիքովների, Արղությանների և Բարաթովների ազնվականական, ինչպես նաև եկեղեցական հողերի հետ, և ընդարձակվելու հնարավորություն չունեին: Գրանցվել են հողի ծայրահեղ պակաս ունեցող թվով 43գյուղեր[28]*:*

Հողաբաժան հանձնաժողովների կողմից փորձ է արվել կրճատել հողի բռնի հափշտակությունները, քննարկել և ավարտին հասցնել կալվածատերերի, ազնվականների, վանքերի ու պետության միջև եղած հողային վեճերը: Սակայն գյուղացիների բողոքներն ու դժգոհությունները վկայում են, որ թեև հաջողվել էր Բորչալուի գավառում նկատելիորեն կրճատել հողային վեճերը, բայց դրանք վերացնել չի հաջողվել: Վեճերը շարունակվեցին պետության ու կալվածատերերի (հիմնականում անտառային տարածքների, ամառային ու ձմեռային արոտավայրերի շուրջ, որոնք չէին մտնում պետական գյուղացիների հողերի սահմանների մեջ), եկեղեցու և ազնվականների, վարձակալ հողատերերի ու գյուղացիների միջև և այլն:

Հողային վեճերի պատճառներից մեկն էլ հողաբաժանման աշխատանքների վերաբերյալ հողատեր ազնվականների կամ վանքերի ներ-

---

[27] *Նույն տեղում, էջ 51–52:*

[28] Ա. Ե ր ի ց օ վ. *Նշվ աշխ., էջ 52–53, 56, 61:*

կայացուցիչներիանտեղյակ լինելն էր: (Դրա հետևանքով հաճախ գյուղերի սահմանները խախտվել են: Հարևան ազնվականական կամ վանքապատկան հողերից բաժիններ են կտրվել և միացվել պետական հողերին): Լորիս-Մելիքովները խնդրում են իրենց մասնակից դարձնել Արդվի գյուղի սահմանազատման աշխատանքներին(տևել են 1871-1889 թվականները), քանի որ հանդիսանում էին գյուղի հողերի մի մասի ժառանգատեր[29]: 1870 թ. մայիսի 14-ին Թիֆլիսից Նատալյա Սերգեևնա Երզնկյան-Յարալյանը հողաբաշխման աշխատանքներն իրականացնող հանձնաժողովին գրություն է հղում, նշելով, որ ինքն ու իր անչափահաս եղբայրներն ազնվականներ Մելիքովների հետ տոհմական կալվածքներ ունեն Ամոջ, Մարց և Կարմիրգյուղ գյուղերում, որոնք ժառանգել են հարազատ մորից՝ ծնունդով Մելիքյան:Լսելով, որ Ամոջը ևս ենթակա է հողաբաժանման, խնդրում է տեղյակ պահել իր հորը՝ Սերգեյ Յարալովին[30]:

Ալավերդու պղնձագործարանի կալվածքների սահմանազատումների ժամանակ հանձնաժողովը պետք է առանձնացներ Ալավերդուն սահմանակից տարածքները: Քանի որ Սանահինի վանքը ևս ուներ սահմանակից կալվածք, ուստի վանահայր Վարդան արքեպիսկոպոս Օձնեցին հանձնաժողովին խնդրում է թույլատրել վանքի ներկայացուցիչներին ներկա գտնվել հողաչափական աշխատանքներին՝ հաշվի առնելով, որ հողերի սահմանները պետության հետ վիճահարույց վիճակում են. «Զորմէ հաղորտելով ձերտ բարեծնութեան, խոնարհաբար խնդրէմ ’ի ժամ որոշելոց զսահմանս կալուածոյ լօռու մէլիքեանցի յանձնելոյ մատանին, ’ի նկատի ունիցիք զվիրոյիշեալ սահմանս վանքական կալուածոյ ձմերոցին… և ’ի դէպս վիճաբանութեան կոչելե զմեզ ներկայ գտանիլ մեզ ’ի ժամ որոշման սահմանայն այնողիկ»[31]:

Ավելի քան 20 հազար դեսյատին կազմող մի հսկայական հողակտորի համար, որ գտնվում էր Դեբեդի աջ ափին, ուր տեղակայված էին հայկական չորս գյուղեր՝ Մարցը, Լորուտը, Ահնիձորը, Աթանը, վեճ էր ընթանում հայ եկեղեցու և ազնվական Մելիքովների միջև, ինչին միջամտեց պետությունը:

Հողային վեճեր էին գրանցվել գյուղացիներին պետական պաշտոնյաների ու խոշոր հողատերերի միջև: Դրանց պատճառն այն էր, որԼոռիում շատ գյուղացիական տնտեսություններ հողազուրկէին,և գյուղացիներն ստիպված ամառային ու ձմեռային արոտավայրեր էին վարձակալում կալվածատերերից ու պետական պաշտոնյաներից, որոնցից էին Ջալալօղլիում Խանագովները (չինովնիկ Միխայել Խանագով,

[29] *ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 28, թ. 17:*
[30] *Նույն տեղում, գ. 13, թ. 5:*
[31] *Նույն տեղում, թ. 26:*

Մկրտիչ և Մովսես Խանագովներ, Ասատուր Խանագով և այլք), չինովնիկներ Հայրապետ Տեր-Ակոպովը, Եգոր Սաղաթելովը, Տիգրան Տեր-Դավիթովը, ազնվականներ Արազ Շահվերդովը, Փարսադան Զավրիևը, Սարգիս Տեր-Ակոպովը, Եգոր Քալանթարովը, քահանաներ Տեր Հակոպ Շահինովը, Տեր Եսայի Աբովյանցը և այլք, որոնք ունեին սեփական տներ, ջրաղացներ, ալրաղացներ, հողամասեր[32]*:*

1884 թ. պետական արոտավայրերի վերաբերյալ ընդունված նոր օրենքով հողի սեփականատերերը պայմանական գումարով թույլ էին տալիս օգտվել իրենց հողամասերից: Օրբելիանիները, Կոբուլովները, Մելիքովները, Արղությանները, Բարաթովները, Լորիս-Մելիքովները և այլք ամառանոցների և ձմեռանոցների համար բավական ընդարձակ տարածքներ էին տրամադրում նրանց, ովքեր բավարար պետական հողեր չունեին: Օրինակ՝ Հագվիի բարեկեցիկ ընտանիքները՝ 8 ծուխ, ամռանը քոչում էին Լալվար լեռ, Լորիս-Մելիքովների կալվածք՝ 70 ռուբլի վճարով: Ամռանը Լեջանում որոշակի գումարի դիմաց ամառային արոտավայրեր էին ձեռք բերում Հայդարբեկի, Ազարակի, Մղարթի, Օվանդարայի բնակիչները: Վարդաբլուրի, Գյուլաքարակի, Դարաքենդի, Ղամշկուտի, Կուրթանի, Նովոալեքսանդրովկայի, Ջալալօղլիի, Շահալիի բնակիչների մի մասը վարձակալում էին մոտակա անտառները: Լոռի գյուղի ունևոր բնակիչները 100 ռուբլի վճարով ձմեռանոց էին վարձում իշխան Օրբելիանիներին պատկանող Կզկալ վայրում և 200 ռուբլով՝ իշխան Բարյատինսկու հողի վրա: Պրիվոլնիցեի բնակիչները վարձում էին Օրբելիանիների ամառանոցը՝540 ռուբլով, Սադիբագդիի բնակիչները Եղիգարովներից՝30 ռուբլով, Այվազովներից՝25 ռուբլով, վանքային Սոտ հողի վրա՝ 15 ռուբլով: Ուզունլարցիները մանր եղջերավոր անասունների համար ձմեռանոց էին վարձում Եղիգարովներից, Լորիս-Մելիքովներից, Քալանթարովներից, Շահվերդովներից, Մելիքովներից, նաև Լեջան էին գնում: Նոր ուզունլարցիք հողեր էին վարձակալում Եղիգարովների ու ճոճկանցիների մոտ՝ 20 ռուբլով, Լորիս-Մելիքովների Շեկ աղբյուր հողի վրա՝ 40 ռուբլով: Ծաթերցիք գնում էին Հաղպատ՝ Բարաթովների մոտ: Նաև արենդայով ձմեռանոց էին վերցնում Եղիգարովներից և Շահվերդովներից: Դարաքենդի, Մղարթի բնակիչների մի մասը հողեր էին վարձակալում գեներալ Իսրայել-բեկ Եղիգարովից, Ջալալօղլիի բնակիչները մեկնում էին Կոբուլովներից արենդայով վերցրած հողեր կամ վարձակալում էին պետական ամառանոցներ[33]*: Որոշ գյուղերի բնակիչներ էլ (Շահալիի, Քարինջի)գնում էին հարևան Ալեքսանդրապոլի գավառ: Մի մասն էլ՝(դսեղցիք, քարինջեցիք, խաչի-քենդցիք) ձմեռն անցկացնում էին վանքա-*

[32]Ա. Ե ր ի ց ո վ. *Նշվ աշխ., էջ 63–64:*

[33]*ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82, թ. 391:*

պատկան հողերի վրա: Սարչապետը, Շիշթափան, Շահնազարը օգտվում էին Բորչալուի պետական ամառանոցներից[34]:

1884–1885 թթ. կային գյուղեր, որոնք, բացի ձմեռանոցներից ու ամառանոցներից, ստիպված էին նաև վարելահողեր վարձել մասնավոր հողատերերից: Լոռիում գոյություն ուներ կարգ՝ ըստ որի հողի վարձակալները վճարում էին միօրյա վարելաչափով՝ 1/2 թաղար բերք (կամ 9 փութ)[35]: Բայց այդ վճարը տարեցտարի աճում էր, ինչն էլ վատ էր անդրադառնում արոտավայրեր չունեցող պետական գյուղական համայնքների տնտեսության վրա: Մելիքովներից վարելահողեր էին վարձակալում Հագվիի (54 դեսյատին) և Ուզունլարի (300 դեսյատին), Քալանթարովներից՝ Ուզունլարի (200 դեսյատին), Շահվերդյաններից՝ Ուզունլարի (50 դեսյատին), Ծաթերի (10 դեսյատին), Լորիս-Մելիքովներից՝ Հագվիի (100 դեսյատին), Մղարթի (20 դեսյատին), Օձունի (200 դեսյատին), Նոր Ուզունլարի (40 դեսյատին), Ծաթերի (10 դեսյատին), Օրբելիանիներից՝ Լեջանի (80 դեսյատին), Կոբուլովներից՝ Նոր Ալեքսանդրովկայի (400 դեսյատին վարելահող և խոտհարք), Մելիքովներից՝ Ագարակի (40 դեսյատին) բնակիչները և այլն[36]:

Ծալկայում 7 գյուղ 2 կալվածատիրոջից վարձակալել էին 1657 դեսյատին հող՝ 1644 ռուբլով, Լոռիում 8 գյուղ 7 կալվածատիրոջից՝1463 դեսյատին՝ 6858 ռուբլով և Բորչալուում3 գյուղ 3 կալվածատիրոջից՝ 3815 դեսյատին՝ 2000 ռուբլով: Ընդամենը 18 գյուղ 12 կալվածատիրոջից վարձակալել էին 6935 դեսյատին հող, որի աննշան մասը կազմել են անտառներ և խոտհարքներ՝դրանց համար վճարելով հացով ու դրամով՝ մոտավորապես 10502 ռուբլի[37]: Դուրս է գալիս, որ 1 դեսյատին վարելահողի, խոտհարքի և անտառի համար վարձավճարը կազմել է Ծալկայում մոտ 99 կոպ., Լոռիում՝ մոտ 4 ռ. 62 կոպ., Բորչալուում՝ մոտ 52 կոպ.: Մեկ վարելահողի դեսյատինը վարձակալել են Ծալկայում՝3 ռուբլով, Լոռիում՝ 5 ռ. 50 կոպեկով, Բորչալուում՝ 6–8 ռուբլով:

Փաստորեն, գավառում հիմնական խնդիրը՝ հողապակասության հարցը, դեռևս առկախ էր, և ակնհայտ էր, որ թե՛ ոչ պետական, թե՛ պետական գյուղացիներին իրենց հողը չէր բավականացնում: Առաջինները վարձակալում էին պետական ամառային ու ձմեռային արոտավայրեր և բահրատու հողեր: Պետական գյուղացիներն իրենց հերթին տնտեսական կարիքների նշանակալի մասը բավարարում էին սեփականատիրական հողերի հաշվին: Նման վերաբաշխումը բնակիչների

---

[34] *Նույն տեղում, թ. 442–451, 481:*

[35] *1 փութը հավասար է 16, 3 կգ:*

[36] Ա. Ե ր ի ց ո վ. *Նշվ աշխ., էջ 109:*

[37] *Նույն տեղում, էջ 110:*

բնականոն տնտեսական կյանքում առաջացնում էր անխուսափելի հետևանքներ, և նրանց մղում հողեր ձեռք բերել ոչ թե որտեղ հարմար է, այլ որտեղ հնարավոր է: Հողի գինը՝ կախված հանգամանքներից, տարբեր է եղել: Նախ, դա բխել է վարձակալ հողատիրոջ կամքից. որքան ազդեցիկ էր տոհմը, այնքան թանկ էր վարձավճարը (քանի որ լավագույն հողատարածքներնազդեցիկ ազնվականական տոհմերի ձեռքում էին), երկրորդ՝ հողի գինը որոշվում էր դրա բերքատու և ոռոգելի լինելու հանգամանքով:

Լոռիում հողի սեփականատերեր էին դարձել նաև համայնքները: Ազնվականներից գնման ճանապարհով մեծ հողամասեր էին ձեռք բերել ռուս վերաբնակիչները, Շահնազարի հայ կաթոլիկները, Օպրետ գյուղի հույները, Եկատերինենֆելդ և Ալեքսանդերհիլֆս գերմանական գաղութները: Վորոնցովկայի մոլոկանները շարունակում էին բնակվել նույն տարածքում, որը մի ժամանակ պատկանել էր իշխան Մակար Օրբելիանիին և 1847 թ. 5250 դեսյատին չափով վարձավճարով տրվել էր նրանց: 1870 թ. նրանք Մակար Օրբելիանիից գնեցին նոր վարելահող և արոտավայր՝ իրենց տարածքները հասցնելով 7000 դեսյատինի, և 1000 դեսյատին անտառ՝ ամբողջ 8000-ի դիմաց պետության օժանդակությամբ վճարելով 56000 ռուբլի: 1882 թ. Վորոնցովկայի մոլոկանների 59 ընտանիք իշխան Վախթանգ Օրբելիանիից գնել է խոտհարքներ, արոտավայրեր և վարելահողեր՝ 3311 դեսյատինչափով: 1885 թ. նրանք իշխան Օրբելիանիներից և Կորուլովներից գնեցին երրորդ հողատարածքը՝ ավելի քան 3000 դեսյատին[38]:

Վորոնցովկացիներին հետևեցին նրանց հարևանները՝ Շահնազարի հայերը՝ գնելով մինչ այդ իրենց կողմից վարձակալված իշխան Օրբելիանիների հողերը[39]: Ավելի ուշ, պետական Օպրետի գյուղի բնակիչները Մելիքովներից գնեցին 200 դեսյատին, իսկ 1885 թ. փորձեցին գնել նաև իրենց կողմից 800 ռուբլով վարձակալած հողամասը՝ 1160 դեսյատին չափով: Եկատերինենֆելդի գերմանացիները 1880 թ. սկսած իշխան Օրբելիանիներից և իշխանուհի Մուխրանսկուց գնել են մինչև 2790 դեսյատին՝ 60300 ռուբլով, Ալեքսանդերհիլֆսի բնակիչները՝ իշխան Էրիստովից ձեռք են բերել մինչև 565 դեսյատին՝ 7350 ռուբլով և այլն[40]:

Հողօգտագործման կապալային ձևի առաջացման, տեղի կալվածատերերի ու վրացի իշխանների կողմից նորանոր հողեր ձեռք բերելու, 1895 թ. Թիֆլիս–Կարս երկաթգծի[41] կառուցման հետևանքով կրճատվե-

---

[38] *ՀԱԱ, ֆ. 66, ց. 1, գ. 20, թ. 31:*

[39] *«Մշակ» (Թիֆլիս), 29. XII. 1877:*

[40] А. Е р и ц о в. *Նշվ աշխ., էջ, 107:*

[41] *Երկաթուղին անցնելու էր Թիֆլիս–Բորչալու–Ալավերդի–Մեծ–Ղարաքիլիսա–Համամլու–Ջաջուռի լեռնանցք–Ալեքսանդրապոլ ուղղությամբ:*

ցին նաև վանքապատկան հողատարածքները: Վանքային տնտեսությունները հետզհետե թուլացան, վանքերն այլևս չէին կարողանում սեփական միջոցներով հոգալ իրենց կարիքները: Հաղպատի վանահայրերը Կոնսիստորիային քանիցս գրություններով տեղեկացրել են վանքի տնտեսության աղքատ վիճակի մասին, դրամական օժանդակություն խնդրել[42]:Այս հանգամանքները խթան հանդիսացան Լոռիում վրացի կալվածատերերի նորանոր իրավունքների ձեռքբերման համար: Լոռուգավառի Քարինջգյուղի գյուղացիները 1899թ. մարտի 28-ին դիմում են հոգևոր կառավարությանը՝ խնդրելով, որ վանքային կառավարությունը մի փոքր զիջողությամբ վարվի իրենց հետ, քան վրացի վարձակալների[43]:

Այսպիսով, Լոռու գավառում հողի սեփականատիրոջ իրավական համակարգը փոփոխություն է կրում՝ տարբեր հանգամանքներից կախված: Հողը, հանդիսանալով եկամուտի հիմնական աղբյուր և հարստության որոշիչ, ձեռքիցձեռք է անցնում, մի դեպքում հանդես գալով որպես վարձավճարով տրված, մի այլ դեպքում՝ պետականացված կամ սեփականաշնորհված տարածք, ավելի հազվադեպ՝ որպես առևտրական գործարքի կամ պարզապես բռնազավթման հետևանք: Արդյունքում հողի տիրապետության մի տեսակը փոխարինվում է մեկ այլով, ինչը բացասաբար էր անդրադառնում գյուղացիության վրա: Նախկինում վանքապատկան համարվող տարածքը կարող էր վերածվել ազնվականականի, ազնվականականը՝ պետականի կամ մասնավոր սեփականի և այլն: Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով պետական և կալվածատիրական հողերի քանակն ավելանում է՝ վանքապատկան և տոհմիկ ազնվականական հողերի հաշվին: Ի հայտ են գալիս հողօգտագործման նոր ձևեր: Հողը կապալով տալը մի կողմից կապալառուին հնարավորություն է տալիս ազատ տնօրինել հողը, մյուս կողմից, գյուղացուն դնելով նոր տեսակի հարկման տակ, ավելի է ծանրացնում նրա տնտեսական դրությունը: Հողի համար պայքարը չդադարեց մինչև դարավերջ և ակնհայտորեն խոչընդոտ դարձավ տարածքի տնտեսական կյանքի զարգացման համար:

Չնայած այս ամենին՝ թե՛ վանքերը, թե՛ Լոռու տոհմիկ հողատերազնվականները կարողացան անգամ XX դ. սկզբներին պահպանել իրենց հողատիրության մի մասը:

СИСТЕМА ЗЕМЛЕВЛАДЕНИЯ В ЛОРИ

[42] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 236ա, վավ. 8, թղթ. 236բ, վավ. 21:*
[43] *Նույն տեղում, թղթ. 237ա, վավ. 58, թ. 1:*

(Вторая половина XIX в.)

АСМИК АМИРДЖАНЯН

Р е з ю м е

Существовавшие в Лори еще до присоединения к России (1801 г.) формы земельной собственности, а именно частновладельческая, монастырская и государственная, с большими или меньшими изменениями сохранились и во второй половине XIX в. Главными землевладельцами являлись государство, церковь и дворяне. Между ними шли непрерывные территориальные споры. В архивах Армянской территориальной консистории Грузии и Имеретии сохранилось много материалов о борьбе между ними. Во второй половине XIX столетия царизм в Закавказье проводил аграрную политику: было издано Положение о размежевании земель. После этого многие земли стали государственными. Несмотря на это, факты свидетельствуют о том, что армянская церковь и землевладельцы сохранили часть своих земель вплоть до конца XIX в. и начала XX в.

THE LANDOWNING SYSTEM IN LORI
(The 2nd half of the 19th c.)

HASMIK AMIRJANYAN

S u m m a r y

Before Lori joined Russia (1801), there existed different kinds of properties: church, government and privately owned lands. All these properties existed till the 2nd half of the 19th c. The main landowners were the church, the government and the nobles. There were always continuous territorial discussions between them. There were many archive materials in Armenian consistory of Georgia and Imereti about the debates between them. The tsarism carried out the land policy in Transcaucasia and published the Statute about the demarcation of land in the 19th c. After that the main part of lands belonged to the government. However, there are facts showing that the Armenian church and landowners preserved their own lands until the end of the 19th c. and the beginning of the 20th c.